

ԱՌԱՋ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԵՄԵՐԻՆ

(Շար. նախորդ թիւերէն)

ԻՆՉՊԵՍՏ ՕԳՆԵԼ ԱՅՐԱՄԵՐԻՆ

Բարձր տնտեսական ազդեցութիւնէն մարդու մարմինն վրայ այրուածքներ առաջ կուգան։ Այս այրուածքները կարող են առաջ դալ եռացած ջրէն կամ այրող հեղուկներէն և նիւթերէն, կամ կրակէն։

Այրուածքները զանազան աստիճանի կ'ըլլան։

Թեթև այրուածքը առաջ կը բերէ մորթին վրայ միայն կարմրութիւն։ Եթէ այրուածքը ուժեղ ըլլայ, մորթին վրայ բշտիկներ առաջ կուգան. իսկ ամենախիստ այրուածքներէն մորթը և ներքեւը դառնում մասերը կ'այրուին բոլորովին և ածուխ կը դառնան։ Վրտանգաւոր ևն ոչ միայն զօրեղ այրուածքները, այլև թեթևները, մանաւանդ երբ անոնք մարմնոյն վրայ մեծ տեղ կը բռնեն։ Ատոր պատճառն ալ այն է որ փնասուած մորթը այլևս չի կրնար կատարել իր կարևոր աշխատանքը։ Անգամ մը երկու աշխատաւոր, որոնք պայթումէն վերջ այրուածքներ ստացած էին, ոտքով դացին բժիշկին մօտ. բայց երեք ժամ յետոյ երկուքն ալ մեռան, որովհետև երկուքին ալ մարմինն մէկ երրորդէն աւելին այրած էր։ Այրող և վառող նիւթերու հետ գործ ունեցողները, պէտք է ունենան նաև պաշտպանող հագուստ մը։

Այրուածքի պարագային նախ և առաջ պէտք է հոգ տանիլ որ մանրէները՝ փնասուած մորթէն ներս չմտնեն կազմուածքին մէջ։ Այս պատճառով պէտք է կապել այրուած մասը, մաքուր կերպով, ինչպէս սովորական վէրքը։

Այրուողին օգնելու ատեն պէտք է զգուշութեամբ հագուստը հանել, պատռել մկրատով, ցանալով չվնասել մորթը եւ չպատռել գոյացած բշտիկները։ Եթէ այրուածքը թեթև է և միայն կարմրութիւն պատճառած է, կարելի է ցանել մաքուր Թալքի փոշի։ Եթէ բշտիկներ կան, պէտք է այրուած մասին վրայ քսել վազելին կամ կրակաթի (lait de chaux) հետ խառնուած կտաւատի ձէթ։ Պէտք չէ պատռել բշտիկները, որովհետեւ այդպէսով կը նպաստէք մանրէներուն ներս մտնելուն եւ վերջին վարակման։

ԻՆՉՊԵՍՏ ՕԳՆԵԼ ՅՐՏԱՀԱՐԻՆ ԵՒ ՍԱՌԱՄԻՆ

Գրեթէ միևնոյն փնասները առաջ կուգան ցրտէն։ Նախ անհրաժեշտ է գիտնալ թէ ինչպէս պէտք է պաշտպանուիլ սառելէն։ Եթէ ձմեռը երկար ճանապարհորդութիւն կ'ընէք, անհրաժեշտ է որ կուշտ ուտէք. հագուստը պէտք է որ մարմինն լաւ յարմարցուած ըլլայ և

լաւ կոճկուած, բայց ոչ նեղ, որպէսզի չխանդարէ արեան շրջանա-
ռութիւնը. մանաւանդ Ֆլասսակար է նեղ կոշիկը: Լաւ է նարպ քան
ոտքերուն և ականջներուն: Ծամբորդութեան առէն աշխատելու է
եռ չմնալ ընկերներէն: Յոգնութեան պարագային պէտք չէ գետին
պաւկիլ, որովհետեւ ստակելու սկզբնաւորութեան մարդու քունը կը
տանի և եթէ սաստիկ ցուրտ առնէ յոգնած մարդը պաւկի, անհիշա-
պէս կը քնանայ և այդպէս ալ քնացած կը մնայ: Հետեւաբար աւելի
վտանգաւոր է զինի և կամ օշի գործածելը, որովհետեւ գինեմոյները
ցուրտէն կը քնանան և կը սառնին:

Յրտահարութիւնը և սառիլը կրնան պատահիլ ոչ միայն սաստիկ
ցուրտ եղանակին՝ այլ և աշնան ցուրտ, խոնաւ և հովոտ եղանակին:

Սառելու պարագային, քիթը, ականջները կամ այտերը նախ ու-
ժեղ կերպով կը գունատին, որովհետեւ արեան շրջանը կը դադրի:
Պէտք է ձիւնով ուժեղ շփել գունատ մասը, արիւնը նորէն կը լեց-
ուի սառած մասին մէջ: Իսկ եթէ հակառակ այդ միջոցին, այլ աւելի
սառնի այդ մասերը, այն առնէ մորթը կը կարմրի և կ'ուռի, ինչպէս
թեթեւ այրուածքի պարագային: Իսկ եթէ սառիլը շատ ուժեղ է, այն
առնէ մորթը կամ մարմնոյ սառած ափսոսելի մասը կը մեռնի: Սառած
մասերուն վրայ պէտք է քսել վաղելիլն, կապել ինչպէս վերքերը, խոյ
գարմանելու համար՝ անպատճառ գինիլ բժշկին:

Եթէ մէկը կը մսի, պէտք է տաքնայ խարոյկի մօտ և կամ տուն
երթալ: Իսկ երբ յոգնած և ցուրտէն քնացած մէկը սկսած է փայտա-
նալ, պէտք չէ անմիջապէս զայն տաքցնել սենեակի մէջ կամ խա-
րոյկի մօտ, որովհետեւ շատ զէշ ազդեցութիւն կրնայ ունենալ ար-
եան շրջանառութեան վրայ և նոյնիսկ մահ պատճառել: Սառած
մարդիկը, երբ կրակին քով տաքցուն, շատ շուտ կը մեռնին:

Սառած մարդու մարմինը պէտք է ուժեղ կերպով շփել ձիւնով
կամ պաղ ջուրով, ոչ թէ սենեակին մէջ, այլ դուրսը: Կարելի է անոր
տալ զգալ զգալ զօրաւոր թէյ կամ սուրճ, եթէ ի հարկէ ի վիճակի է
կուլ տալու:

Շատ մեծ զգուշութեամբ պէտք է տեղափոխել սառած մարդը,
որովհետեւ շատ զիւրին է կոտրել ձեռքը կամ ոտքը: Սառածը կարելի
է սենեակ տանիլ, այն ալ զով սենեակ մը, միայն այն ժամանակ,
երբ ուշքի եկած է, և երբ փայտացած անդամները կակուղցած են և
կենդանութեան նշաններ ցոյց կուտան:

ԱՅՍ ԹԵՐԹԸ ՔՈՒԿԴ Է . . .

Եթէ կայ բան մը որ չես գտներ այս էջերուն մէջ, բարի եղիւր մատ-
նանշել. Թելադրութիւններդ անմիջապէս նկատի պիտի առնուին:

Բայց եթէ պիտի Թնլադրես որ «Բուժմանք»-ի ծաւալը աւելցնենք,
որ մեր ալ փափաքն է, բարի եղիւր նախ մէկ-երկու բաժանորդ գտնել: